Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
15.05.2023թ. թիվ 11 նիստում
Տնօրեն Ք. Ահարոնյան

Քննարկվել է հաստատության
կոլեգիալ կառավարման խորհրդի
27.06.2023թ. թիվ 05 նիստում
Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»-ի ուսանողների ստացած գնահատականների վերահանձնման

Գյումրի 2023

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կարգով սահմանվում է ՀՀ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «այսուհետև՝ Ուսումնարան» ուսանողների ստացված քննությունների վերահանձնման կարգը
- Կարգը կիրառվում է գնահատականների ցածր կամ անբավարար լինելու դեպքում՝ ուսանողին առաջադիմությունը բարձրացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով
- Սույն կարգի ստեղծման հիմք է հանդիսանում 2006 թ. Հուլիսի 21-ի ՀՀ ԿԳ նախարարի No 638-Ն «ՀՀ նախնական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» հրամանի 5-րդ կետը

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԱՑՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- Ուսանողներին հնարավորություն է տրվում քննությունները վերահանձնել յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, սակայն ոչ ավարտական կուրսի վերջին կիսամյակում
- Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 1 ամիս շուտ ուսանողը ներկայացնում է դիմում քննական առարկաներ վերահանձնելու համար
- Վերահանձնումների առավելագույն քանակը սահմանվում է երեք առակա (մոդուլը)
- Պրակտիկաների համար վերահանձնում չի նախատեսվում
- Վերահանձնվող քննությունների ժամանակացույցը կազմում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը
- Վերահանձնման թույլտվությունը քննարկվում է մանկավարժական խորհրդի, և թույլատրվում մանկավարժական խորհրդի նախագահի՝ տնօրենի կողմից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում
- Քննության տեսակը (գրավոր, բանավոր, գործնական պարապմունք), հարցաշարերը, քննական առաջադրանքները քննարկվում և հաստատվում են մանկավարժական խորհրդի կողմից

- Դիմումը մերժելու դեպքում տնօրենը պարտավոր է հիմնավորել մերժման պատճառը
- Վերահանձնման թույլատրումից հետո, ըստ կազմած ժամանակացույցի, ուսանողը ներկայանում է քննության
- Քննությունից մեկ օր առաջ կազմվում է վերահանձնման հանձնաժողովը, որի կազմում առկա է 5 անդամ.
  - ✓ Տնօրեն (հանձնաժողովի նախագահ)
  - ✓ Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
  - ✓ Առարկայական մեթոդական միավորման նախագահ (հանձնաժողովի քարտուղար)
  - ✓ Տվյալ առարկայի 2 մասնագետ կամ 1 հարակից առարկա դասավանդող մասնագետ
- Եթե վերահանձնման արդյունքում գնահատականը ստացվում է ավելի բարձր, ապա վերջնական գնահատականը բարձրացվում է ի օգուտ ուսանողի
- Եթե վերահանձնման արդյունքում ստացած գնահատականը նախորդից ցածր է, ապա պահպանվում է նախորդ քննության գնահատականը

ԳԼՈՒԽ 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կարգը հրապարակվում է Ուսումնարանի պաշտոնական կայքում
- Սույն կարգը տարածվում է՝ այն կիրառման մեջ դնելուց հետո ծագած հարաբերությունների վրա
- Կարգը վերանայվում, փոփոխության է ենթարկվում ըստ անհրաժեշտության
- Կարգը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, հաստատվում կամ փոփոխությունների է ենթարկվում Ուսումնարանի կառավարման խորհրդի որոշման հիման վրա